Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԵԿՄԱԼՅԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԵՎ ԺԱՄԱԳՐՔԻ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԱՌԻԹՈՎ

(26 սեպտեմբերի 2017 թ., Սուրբ Էջմիածին)

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Սիրելի՛ հոգեւոր հայրեր եւ ներկաներ,

Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում այս հանդիսության բոլոր մասնակիցներիդ: Ուրախ ենք այս շնորհանդեսին Հայաստանի Հանրապետության նախագահի մասնակցության համար, որը մեծ քաջալերություն է նման նախաձեռնություններ իրագործելու՝ ի նպաստ մեր մշակույթի պահպանման եւ զարգացման:

Այսօր՝ հաղորդակցության մեծ հնարավորությունների մեր օրերում, հիրավի, անհրաժեշտություն կա մեր ազգային մշակույթի դարավոր ձեռքբերումները վերարժեւորելու, ճաշակով ու բարձր մակարդակով ներկայացնելու եւ դրանցով կրթելու մեր ժողովրդին՝ մեր արժեքները դարձնելով կյանքի, առօրյայի մաս: Ուրախությամբ ենք արձանագրում, որ «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի կողմից այս ուղղությամբ նվիրյալ ջանքեր են ներդրվում՝ ժողովրդական ու հոգեւոր երաժշտության բացառիկ նմուշները ուսումնասիրելու, նոտագրելու, թվայնացնելու, համապատասխան նոր հրատարակություններ պատրաստելու համար: Հիմնադրամի հովանավորությամբ կյանքի կոչվող ծրագրերը նպաստում են մեր ժողովրդական ու հոգեւոր երաժշտական ժառանգության պահպանմանը, խրախուսում հավատարմությունն ու նախանձախնդրությունը մեր մշակույթի, ի մասնավորի երաժշտարվեստի դարավոր ավանդների հանդեպ՝ պատշաճորեն դրանք մատուցելով մեր ժողովրդին, ինչպես նաեւ միջազգային հանրությանը: Այս իմաստով ուշագրավ է եւ գնահատանքի արժանի նաեւ Նոյյան տապանի տեսքով պատրաստված երաժշտական գանձատուփը, որի մեջ զետեղված են «Հայկական ազգային երաժշտական գանձարան» ծրագրի շրջանակներում ձայնագրված նմուշները: Հիշյալ ձեռնարկումները կարեւոր ազդակ են նաեւ նոր սերնդին մեր մշակութային հարուստ ժառանգությանը հաղորդակից դարձնելու գործում:

Այս նախաձեռնությունների շրջանակներում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությամբ, «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի ջանքերով հրատարակվել են Մակար Եկմալյանի հեղինակած Պատարագի՝ երգչախմբի համար նախատեսված բաժինը, ինչպես եւ երաժշտագիտական վերլուծություններով ու ժամանակակից նոտագրության չափանիշներով՝ երաժշտագետ Նիկողայոս Թաշչյանի կողմից գրի առնված Ժամագիրքը:

Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի հիմնադիր Արթուր Ջանիբեկյանին, հիմնադրամի տնօրինությանն ու աշխատակիցներին մեր մշակութային արժեքների պահպանության գործում ստանձնած հանձնառությունների համար: Մեր գնահատանքն ենք բերում Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ժողովրդական երաժշտության ամբիոնի վարչությանը, ինչպես եւ տարբեր տարիներին կոնսերվատորիայում սովորող ուսանողներին, ովքեր իրագործել են նշյալ Ժամագրքի վերծանման աշխատանքները:

Մշտանորոգ հաջողություններ ու արդյունավորում «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի ազգանվեր ու մշակութասեր բարի գործերին:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը եւ օրհնությունը միշտ հովանի լինեն մեր հայրենիքին ու ժողովրդին այսօր եւ հավիտյանս. ամեն: